ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 19.11.2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈՒՐԱԴ ԱՐԱՐԱՏԻ ԱՍՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԹԻՎ ԿԳ-25075-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Ռուբեն Հակոբյանի, խորհրդի անդամներ՝ Դավիթ Վարդիկյանի, Լիլիթ Ղազանչյանի, Մարինե Ֆարմանյանի, Պավել Գյուլումյանի, Դավիթ Մելքոնյանի, Ռոման Ահարոնյանի, Էմին Բեգլարյանի և Արսեն Հարությունյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 19.11.2025թ. թիվ ԿԳ-25075-2-Ա որոշման դեմ բերված բողոքը,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Մանյա Գասպարյանը (**այսուհետև՝ Բողոքաբեր կամ Դիմող**), դիմելով Պալատ խնդրել է փաստաբան Մուրադ Ասրյանին (արտոնագիր՝ 877) **(այսուհետև՝ Փաստաբան)** նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ, իր աշխատանքային վեճի շրջանակներում բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև հանձնարարության ընթացքի մասին վստահորդին չտեղեկացնելու համար:

Պալատի նախագահի 30.06.2025թ. թիվ 186-Ա/ԿԳ-25075 որոշմամբ փաստաբան Մուրադ Ասրյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետև նաև՝ Օրենք**) 19-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին և** 2-**րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետև նաև՝ Կանոնագիրք**) 3.5.5 **և** 3.6.1 **ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Պալատի կարգապահական հանձնաժողովի (**այսուհետև՝ Հանձնաժողով**) 19.11.2025

թվականի թիվ ԿԳ-25075-2-Ա որոշմամբ (**այսուհետև՝ Որոշում**) Փաստաբան Մուրադ Ասրյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար:

Դիմողը բողոք (**այսուհետև՝ Բողոք**) է ներկայացրել Որոշման դեմ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**), որը Պալատում մուտքագրվել է 05.06.2026 թվականին:

2. **<u>Հանձնաժողովի Որոշման էությունը.</u>**

Հանձնաժողովը Որոշմամբ արձանագրել է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի աշխատանքային վեճով իրավունքների և շահերի պաշտպանությունը, սակայն հանձնարարության կատարման ընթացքում Դիմողի հղիության վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի հաշվառմամբ չի իրականացրել անհրաժեշտ դատավարական գործողություններ՝ մասնավորապես հայցի հիմքը լրացնելու, ապացույցների ներկայացման ժամկետը վերականգնելու և ապացուցման պարտականության բաշխման մասին որոշումը փոփոխելու ուղղությամբ:

Հանձնաժողովը նաև արձանագրել է, որ Փաստաբանը Դիմողին պատշաճ և ժամանակին չի տեղեկացրել գործով կայացված դատական ակտի մասին՝ դրանով վերջինիս չապահովելով գործի հետագա ընթացքի վերաբերյալ ողջամիտ ժամկետում որոշում կայացնելու հնարավորությամբ:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը Փաստաբանի վարքագծում հաստատված է համարել «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտումը և Փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերը հայտնել է, որ համաձայն չէ Հանձնաժողովի եզրահանգումների հետ:

Մասնավորապես, Բողոքաբերը նշել է, որ Հանձնաժողովը հաշվի չի առել Փաստաբանի անձը բնութագրող որոշ հանգամանքներ, որոնք էական նշանակություն ունեն կարգապահական գործի շրջանակներում:

Բողոքաբերը վկայակոչել է նախկինում Փաստաբանի դեմ հարուցված թիվ 16208 կարգապահական գործը և հայտնել, որ Հանձնաժողովը անտեսել է Փաստաբանի նախկինում կատարված արարքները:

Բողոքաբերը հղում է կատարել լրատվամիջոցում Փաստաբանի մասին հրապարակված հոդվածին և նշել, որ հոդվածը նույնպես հասանելի չի եղել Հանձնաժողովին: Բողոքաբերը նշել է, որ Փաստաբանը օգտագործել է իրեն տրված լիազորագիրը՝ առանց վստահորդին տեղեկացնելու, որով խախտել է Օրենքը:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքաբերը խնդրել է Փաստաբանի նկատմամբ կիրառել ավելի խիստ կարգապահական տույժ՝ փաստաբանական գործունեության արտոնագրի գործողության դադարեցում:

4. **<u>Բողոքի վերաբերյալ Փաստաբանի պատասխանը</u>**.

Հաշվի առնելով, որ Բողոքի քննությունը սահմանափակվել է այն ներկայացնելու ժամկետի պահպանված լինելու հարցով և Բողոքը ենթակա է թողնելու առանց քննության, Փաստաբանից բողոքի բովանդակության վերաբերյալ լրացուցիչ բացատրություն պահանջելու անհրաժեշտություն չի առաջացել:

5. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բողոքաբերը Որոշումը ստացել է 26.02.2026թ.: *Սույն փաստը հաստատվում է Բողոքաբերի կողմից կարգապահական գործերը համակարգողին էլեկտրոնային փոստով ուղարկված պատասխան նամակով:*

2) Բողոքը փոստային օպերատորին է հանձնվել 04.06.2026թ. և Պալատում մուտքագրվել է 05.06.2026թ.: *Սույն փաստը հաստատվում է թիվ LO133770404AM փոստային առաքանու պատմությամբ, ինչպես նաև Բողոքի մուտքի կնիքով:*

6. **<u>Պալատի խորհրդի որոշման պատճառաբանական մասը</u>**.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Բողոքը պետք է թողնել առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.11-**րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** ***բողոքը*** *կամ փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքը* ***փաստաբանների պալատի խորհուրդը քննում և որոշում է կայացնում այն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:***

Օրենքի 39.7-**րդ հոդվածի** 9-**րդ մասի համաձայն՝** *Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին կարգապահական հանձնաժողովի որոշումը կողմերը կարող են բողոքարկել փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով* ***այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում****:*

Օրենքի վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ Կարգապահական հանձնաժողովի որոշման դեմ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձը պարտավոր է իր բողոքը ներկայացնել որոշումը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Հետևաբար, մեկամսյա ժամկետի լրանալուց հետո տվյալ անձն այլևս չի կարող բողոքարկել Խորհրդին Կարգապահական հանձնաժողովի որոշումը:

Միաժամանակ Խորհուրդն իրավասու է քննել կարգապահական հանձնաժողովի

որոշման դեմ ներկայացված բողոքը, եթե այն ներկայացվել է Օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Տվյալ դեպքում Բողոքաբերը Որոշումը ստացել է 26.02.2026թ., ինչը հաստատվում է վերջինիս պատկանող tatahini495@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից կարգապահական գործերը համակարգողին ուղարկված հաղորդագրությամբ:

Միաժամանակ, Բողոքաբերն իրավունք ուներ Որոշման դեմ բողոք ներկայացնել այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում, այսինքն՝ մինչև 27.03.2026 թ. ներառյալ: Մինչդեռ թիվ LO133770404AM փոստային առաքանու տվյալներից և Բողոքի մուտքի կնիքից հետևում է, որ Բողոքը փոստային օպերատորին է հանձնվել 04.06.2026թ. և Պալատում մուտքագրվել է 05.06.2026թ., այսինքն՝ Օրենքով սահմանված բողոքարկման մեկամսյա ժամկետի ավարտից հետո:

Նկատի ունենալով, որ Բողոքը ներկայացվել է Օրենքով սահմանված բողոքարկման ժամկետի խախտմամբ, հետևաբար այն պետք է թողնել առանց քննության: Նման պայմաններում Խորհուրդը չի անդրադառնում Բողոքաբերի կողմից ներկայացված բովանդակային փաստարկներին, ինչպես նաև Փաստաբանի նկատմամբ կիրառված կարգապահական համաչափության հարցին:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 39.7-**րդ հոդվածի 9-րդ մասով և 39.11-րդ հոդվածով**,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 19.11.2025թ. թիվ ԿԳ-25075-2-Ա որոշման դեմ 04.06.2026 թվականին ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Ռուբեն Հակոբյան**

06 հուլիսի 2026թ.
թիվ ԿԳ/17-Ա
ք. Երևան